ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

08.04.2016թ. կնքված N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-16/16-2 ծածկագրով Պետության կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման գնման պայմանագրի

ք.Երևան «14» նոյեմբեր 2016թ.

«ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «ՀՀ կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 08.04.2016թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-16/16-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը և այն, որ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի՝ փոփոխությունները արհեստական չեն, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետում «10000000 (տաս միլիոն)» թվերն ու բառերը փոխարինել «12000000 (տասներկու միլիոն)» թվերով ու բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված N 2.-ի (Վճարման ժամանակացույցի) «նոյեմբեր», «դեկտեմբեր» և «Ընդամենը տարի» սյուներում «10000000» թվերը փոխարինել «12000000» թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք.Երևան, Թբիլիսյան խճ. N20
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 193004674290
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 00840437
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ hyundaigarant@yahoo.com
	հեռ. 28-54-47
/ Դ. Բեգլարյան /	/ Մ. Նիկողոսյան /
	Կ.Տ